Տպագրված է ընդամենը 6 օրինակ

Օրինակ N 5

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Հայաստանի Հանրապետության
մշակույթի նախարարի
2007 թ. դեկտեմբերի 3-ի
N 718-Ա հրամանով

ՆԱԽԱՐԱՐ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ է

Հայաստանի Հանրապետության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի սպանդարյանի
տարածքային բաժնի կողմից 18.02.2003 թ.,
գրանցման թիվ՝ 286.210.04877,
վկայական՝ 03Ա 059193
Թիվ 001 2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կենտրոնի տարածքային բաժնի կողմից
12 01.2008 թ.

ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2007

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Կազմակերպություն») շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, երաժշտարվեստի բնագավառում թատերական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության:

3. Կազմակերպությունը «Ալ. Սպենդիարյանի անվ. ազգային օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» պետական հիմնարկի իրավահաջորդն է:

4. Կազմակերպությունը վերագրանցված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

5. Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային Կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

6. Կազմակերպությունը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Կազմակերպությունը այլ Կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ձևաթղթեր, ինչպես նաև կարող է ունենալ խորհրդանիշ:

9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ հիմնադրի պարտավորությունների համար:

11. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

12. Կազմակերպության անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
- հայերեն կրճատ՝ «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ,
- ռուսերեն լրիվ՝ государственная некоммерческая организация «Национальный академический театр оперы и балета имени А. Спендиаряна»,
- ռուսերեն կրճատ՝ ГНО «Национальный академический театр оперы и балета имени А. Спендиаряна»,
- անգլերեն լրիվ՝«A. Spendiaryan opera and ballet national academic theatre» Non-commercial State Organization,
- անգլերեն կրճատ՝« A. Spendiaryan opera and ballet national academic theatre» NCSO:

13. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Թումանյան 54:

II. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները

14. Կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

ա) ազգային, դասական ու ժամանակակից երաժշտարվեստի բնագավառում թատերական բեմադրությունների և ծրագրերի իրականացում.

բ) օպերայի և բալետի ազգային ավանդույթների պահպանում ու զարգացում:

15. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ ձևերը՝

ա) դեկորների, թատերական զգեստների, բեմական կահավորանքի առարկաների պատրաստում.

բ) ձայնալուսային սարքերի ու սարքավորումների սպասարկում և վերանորոգում.

գ) երաժշտարվեստի բնագավառի հետ կապված հրատարակչական գործունեություն:

16. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

17. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանվում է օրենքով և սույն կանոնադրությամբ:

18. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող Կազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով ու չափով:

19. Պետական բյուջեից իրեն հատկացվող միջոցներով Կազմակերպության կողմից ծառայությունների մատուցումը և աշխատանքների կատարումն իրականացվում է լիազորված պետական մարմնի հետ կնքվող պայմանագրերի հիման վրա:

III. Կազմակերպության սեփականությունը

20. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

21. Հիմնադրման ժամանակ Կազմակերպությանը հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է Կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ: Հիմնադրման ժամանակ Կազմակերպությանը հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

22. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

23. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

24. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

25. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

IV. Կազմակերպությանն ամրացված գույքը

26. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

27. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

28. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

29. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության միայն լիազորված պետական մարմնի համաձայնությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը 1 տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

30. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

31. Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

32. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

33. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. Կազմակերպության կառավարումը

34. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ Խորհուրդը և գործադիր մարմինը՝ Տնօրենը:

35. Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

36. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը.

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

37. Կազմակերպության հիմնադիրը սույն կանոնադրության 37-րդ հոդվածի "գ", "դ", "ե" և "է" կետերով նախատեսված իր լիազորությունները կարող է վերապահել լիազորված պետական մարմնին, իսկ Տնօրենի նշանակման լիազորությունը՝ նաև Խորհրդին:

38. Լիազորված պետական մարմինն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

39. Լիազորված պետական մարմինը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է Խորհուրդը և նշանակում Տնօրենին, վաղաժամկետ դադարեցնում է Խորհուրդի անդամների Տնօրենին լիազորությունները, սահմանում Տնօրենի աշխատավարձի և Խորհրդի անդամների պարգևատրման չափերը.

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության Տնօրենի կամ Խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ և համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Խորհրդի աշխատակարգը.

ը) իրականացնում է օրենքով և հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

40. Խորհուրդը բաղկացած է ութ անդամից, որոնցից երկուսը ընտրվում են Կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի անդամների թվից նրանց ինքնակառավարման մարմնի (կամ աշխատանքային կոլեկտիվի) ընդհանուր ժողովի որոշմամբ, իսկ մնացած վեցը՝ նշանակվում են լիազորված պետական մարմնի կողմից այդ մարմնի պաշտոնատար անձանց (աշխատողների), ստեղծագործական, հասարակական և երաժշտարվեստի ու թատերարվեստի բնագավառների այլ կազմակերպությունների աշխատողների (ներկայացուցիչների, անդամների), ինչպես նաև այդ բնագավառների և հասարակական գործիչների թվից:

41. Խորհրդի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք: Տնօրենը չի կարող լինել Խորհրդի անդամ և իրավունք ունի Խորհրդի նիստերին մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

42. Խորհրդի նախագահի և անդամների աշխատանքը չի վարձատրվում, Լիազորված պետական մարմնի որոշմամբ նրանք կարող են միայն տարեկան մեկ անգամ պարգևատրվել Կազմակերպության առևտրային գործունեության արդյունքում ստացված շահույթի ոչ ավել, քան 10 % գումարի հաշվին:

43. Կազմակերպության Խորհրդի լիազորություններն են՝

ա) Կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկությունների ներկայացումը լիազորված պետական մարմնին.

բ) Տնօրենի նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացումը.

գ) հիմնադրի կողմից սահմանված կարգով Կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը.

դ) Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ե) իր աշխատակարգի մշակումը և լիազորված պետական մարմնի հաստատման ներկայացումը.

զ) Խորհրդի ղեկավարի ընտրությունը.

է) սահմանված կարգով լիազորված պետական մարմնին Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

ը) Կազմակերպության ստորաբաժանումների կանոնակարգերի, ներքին կարգապահական և այլ կանոնների հաստատումը.

թ) Տնօրենի հաշվետվությունների քննարկումը և հաստատումը.

ժ) Կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունների քննարկումը.

ժա) օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

44. Խորհրդին չեն կարող վերապահվել Կազմակերպության հիմնադրի, լիազորված պետական մարմնի կամ Տնօրենի լիազորությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

45. Խորհրդի հերթական նիստերը գումարվում են ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

46. Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, Տնօրենի, Խորհրդի անդամների ոչ պակաս, քան մեկ երրորդի պահանջով: Խորհրդի անդամների ոչ պակաս, քան մեկ երրորդի պահանջով Խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով:

47. Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երեք քառորդը:

48. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

49. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

50. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարեցնում է) լիազորված պետական մարմինը:

51. Տնօրենը օրենքով, հիմնադրի, լիազորված պետական մարմնի և Խորհրդի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի, լիազորված պետական մարմնի որոշումների, կամ Խորհրդի, սույն կանո-

սության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

52. Տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են Տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի ու Խորհրդի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ սույն օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

53. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

54. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

55. Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելիս պետական լիազորված մարմնի ղեկավարը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից Կազմակերպությանը կամ պետությանը պատճառած վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով Կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի համար պետական լիազորված մարմնի ղեկավարը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

56. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի, Խորհրդի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

57. Տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում պետական լիազորված մարմնի ղեկավարի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

58. Տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն:

59. Տնօրենի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

ա) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

բ) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

գ) որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իր պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

60. Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են լիազորված պետական մարմնի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է այդ մասին.

բ) լրացել է նրա 65 տարին.

գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան 4 ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

ե) նա ավելի քան 3 օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

զ) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն կանոնադրության 60-րդ հոդվածով նախատեսված հանգամանքները.

է) նա իր գործառույթներն իրականացնելիս Կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը.

ժ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

ժա) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժբ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

ժգ) դատական կարգով Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ, կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

ժդ) Կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

ժե) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:

61. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերն ու կնքում է գործարքներ.

բ) օրենսդրությամբ, հիմնադրի, լիազորված պետական մարմնի, Խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

62. Կազմակերպության ստեղծագործական գործունեության հիմնական հարցերը քննարկելու և այդ գործունեության ուղղություններն ու իրականացման ձևերը որոշելու նպատակով Տնօրենին կից ստեղծվում է գեղարվեստական խորհուրդ:

63. Գեղարվեստական խորհրդի անդամներն են հանդիսանում Կազմակեպության գլխավոր բալետմեյստերը, գլխավոր խորմեյստերը, գլխավոր դիրիժորը և գլխավոր նկարիչը: Գեղարվեստական խորհրդի մյուս անդամներին նշանակում է Տնօրենը՝ Լիազորված պետական մարմնի առաջարկությամբ (կամ համաձայնությամբ):

64. Գեղարվեստական խորհրդի գործունեության կարգը և նրա իրավասությունները սահմանվում են Լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված՝ Տնօրենի կողմից հաստատված կանոնակարգով:

VI. Վերահսկողություն Կազմակերպության գործունեության նկատմամբ

65. Պետական կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, Խորհուրդը:

66. Պետական կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

1. Կանոնադրության «V. Կազմակերպության կառավարումը» բաժնի՝

1) 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի N 419 որոշման 5-րդ կետի համաձայն՝ Կազմակերպության հիմնադիրը սույն կանոնադրության 36-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» կետերով նախատեսված իր լիազորությունները վերապահել է լիազորված պետական մարմնին:»,

2) 60-րդ կետի՝

ա. զ) ենթակետում «60-րդ հոդվածով» բառերը փոխարինել «59-րդ կետով» բառերով,

բ. ժբ) ենթակետում «սոցիալական ապահովագրության հիմնադրամի» բառերը փոխարինել «պարտադիր այլ» բառերով,

3) 63-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«63. Գեղարվեստական խորհրդի անդամներն են հանդիսանում Կազմակերպության գեղարվեստական ղեկավարը, գլխավոր բալետմեյստերը, գլխավոր խորմեյստերը, գլխավոր դիրիժորը և գլխավոր նկարիչը՝ Կազմակերպության կառուցվածքում նման հաստիքների առկայության պարագայում: Գեղարվեստական խորհրդի մյուս անդամներին նշանակում է Տնօրենը՝ Լիազորված պետական մարմնի առաջարկությամբ կամ համաձայնությամբ:»:

2. Սույն փոփոխությունները հանդիսանում են «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝ գրանցված 12.01.2008 թվականին, անբաժանելի մասը: